ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՂԴԱԼՅԱՆ ՄՀԵՐ ԿԱՐԵՆԻ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԺԹ.00.04 - «Կլինիկական, հատուկ հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երեւանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գայանե Միքայելի Շահվերդյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սամվել Հրանտի Սուքիասյան

հոգեբանական գիտությունների թեկնածու, դասախոս
Անահիտ Հրանտի Տեր-Ստեփանյան

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2023թ. սեպտեմբերի 15-ին, ժամը 16:00–ին Երեւանի Պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցե՝ 0025, ք. Երեւան, Աբովյան 52ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երեւանի պետական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2023թ. օգոստոսի 4-ին:

Հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Դ. Ռ. Հայրապետյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: «Ժամանակային հեռանկար» հասկացությունը համեմատաբար նոր է հոգեբանական գիտության մեջ, սակայն այն արդեն իր ուրույն տեղը և նշանակությունը ունի հոգեբանական բազմաթիվ հետազոտություններում: Արտահայտելով ժամանակի նկատմամբ մարդու վերաբերմունքի առավել ամբողջական մոդելը՝ ժամանակային հեռանկարը կապված է հոգեկան երևույթների մեծ բազմության հետ՝ ազդում է դրանց վրա և ինքնին կրում դրանց ազդեցությունը:

Ժամանակային հեռանկարը, լինելով զգայուն արտաքին ուժեղ ազդեցությունների նկատմամբ, փոփոխությունների է կրում սթրեսային գործոնների ազդեցությամբ և հանգեցնում է անձի հոգեբանական առանձնահատկությունների փոփոխության:

Այս համատեքստում յուրահատուկ արդիականություն և կարևորություն է ստանում մարտական գործողությունների մասնակից անձանց մոտ ժամանակային հեռանկարների ուսումնասիրությունը, քանի որ անհրաժեշտություն է առաջանում ընթացիկ ժամանակով փոփոխել և բարելավել մարտական գործողությունների մասնակից անձանց մատուցվող հոգեթերապևտիկ ծառայությունների որակը և արդյունավետությունը, իսկ ԺՀ հասկացումը իր կարևոր դերն է խաղում այդ գործընթացում: Բացի սրանից՝ ԺՀ-ն դիտարկվում է նաև անձնային առանձնահատկությունների հետ փոխկապակցվածության շրջանակում, ինչը աշխատանքը դարձնում է առավել արդիական և հնարավորություն է տալիս լույս սփռել ԺՀ մինչ այս չուսումնասիրված յուրահատկությունների վրա:

Աշխատանքի նպատակն է բացահայտել ժամանակային հեռանկարների և անձնային առանձնահատկությունների դրսևորման օրինաչափությունները և փոխակապակցվածությունը մարտական գործողությունների մասնակիցների շրջանում և ՀՏՍԽ ախտանիշների առկայության պարագայում:

Աշխատանքի խնդիրներն են.

1. Սույն աշխատանքի հիմնախնդիրների համատեքստում ուսումնասիրել ժամանակային հեռանկարներին, դրանց վրա անձնային առանձնահատկությունների և ՀՏՍԽ ազդեցությանը վերաբերող գիտական գրականությունը:
2. Մշակել այս աշխատանքում դիտարկվող հիմնախնդիրներին համապատասխան հետազոտվող հոգեբանական երևույթների չափման մեթոդակազմ, որը թույլ կտա առավելագույնս դիտարկել և բացահայտել դրանք հետազոտական ընտրանքի մոտ:
3. Մշակել հետազոտական նախագիծ և դրան համապատասխան իրագործել հետազոտական մտահաղացումները:
4. Արձանագրել և հավաքագրել ստացված տվյալները, բերել դրանք չափելի և համադրելի միավորների:

5. Վերլուծել և համեմատել հետազոտության միջոցով ստացված տվյալները՝ ըստ վարկածով ձևավորված հետազոտական խմբերի:
6. Համեմատել և համադրել հետազոտության արդյունքում ստացված միավորները միմյանց հետ՝ փորձելով գտնել առկա վիճակագրական փոխկապակցվածությունները և կորելյացիաները:
7. Մշակել առաջարկություններ՝ ուղղված ՀՍՏԽ ախտանիշների բարձր մակարդակով անձանց տրամադրվող հոգեթերապևտիկ աջակցության բարելավմանը:

Հետազոտական վարկածը: Ենթադրվում է, որ մարտական գործողությունների մասնակիցների շրջանում «բացասական» ժամանակային հեռանկարների և որոշ անձնային գծերի արտահայտվածության մակարդակը բարձր է նույնիսկ հետտրավմատիկ սթրեսային խանգարման բացակայության պարագայում, այնուհանդերձ, ՀՍՏԽ ախտանիշների բարձր մակարդակը ունի ավելի ուժեղ ազդեցություն նեգատիվ անցյալի, հեդոնիստական և ֆատալիստական ներկայի ժամանակային հեռանկարների և հիպոմանիայի, դեպրեսիայի ու պարանոյալության անձնային գծերի վրա, քան մասնակցության փաստը:

Հետազոտության օբյեկտն է ժամանանակային հեռանկարը, անձնային գծերը և ՀՍՏԽ-ն մարտական գործողությունների մասնակից անձանց մոտ:

Հետազոտության առարկան է ժամանակային հեռանկարների, անձնային գծերի և ՀՍՏԽ կապը մարտական գործողությունների մասնակից անձանց մոտ:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքն են կազմում Ջ. Վեարդենի առաջարկված դրույթները հոգեբանական ժամանակի և դրա ընկալման մասին, ինչպես նաև՝ նրա կողմից «ներքին և քիմիական ժամացույցների» մասին գիտական հայացքների համապարփակ վերլուծությունը: Ժամանակի ընկալման վրա ազդող հոգեբանական դետերմինանտների էության հասկացման համար հիմք են հանդիսացել Ս. Դրոյտ-Վոլեի, Կ. Ֆորտինի, Ռ. Բրետոնի, Ռ. Ռուսսոյի և այլոց հետազոտությունները: Ժամանակային հեռանկարի էության մասին պատկերացումները հիմնվում են Ֆ. Զիմբարդոյի և Ջ. Բոյդի առաջարկած ԺՀ ընդհանուր սոցիալ-կոգնիտիվ կոնցեպտուալ մոդելի վրա, ինչը գաղափարապես և մեթոդաբանորեն ուղղորդում է ԺՀ՝ նրանց կողմից իրականացվող հետազոտությունները, շարունակում և ընդլայնում է Կ. Լևինի ավանդույթները՝ առաջ տանելով ԺՀ լայն կոնցեպտուալիզացիան՝ որպես հիմնադիր գործընթաց ինչպես անհատական, այնպես էլ հասարակական գործառույթների մակարդակում: ԺՀ-ների և տրավմատիկ իրադարձությունների կապի ուսումնասիրությունները հիմնվում են Ֆ. Զիմբարդոյի և Ռ. Սվորդի մոտեցումների վրա:

Հետազոտության համակազմը, իրականացման պայմանները և մեթոդները: Որպես հետազոտության թիրախ են ընտրվել մարտական գործողությունների մասնակցած անձինք, իսկ մարտական գործողությունների

մասնակցության գործոնի ազդեցությունը մնացած այլ գործոններից տարանջատելու համար ընտրվել է նաև նույն տարիքային միջակայքում գտնվող, նույն սեռին պատկանող, սակայն մարտական գործողությունների երբևէ չմասնացած անձանցինց կազմված ստուգիչ խումբ:

Փորձարարական խումբը փաստացի կազմել են թվով 61 տղամարդիկ (միջին տարիքը՝ մոտ 30), իսկ հետազոտական ստուգիչ խումբը կազմել են 60 տղամարդիկ (միջին տարիքը՝ մոտ 28):

Հետազոտության անցկացման համար ընտրվել են ԱՄՆ կառավարությանն առընթեր գործող «ՀՏՍԽ ազգային կենտրոնի» առաջարկած «Առաջնային օգնության ՀՏՍԽ սքրինինգ թեստը՝ ըստ DSM-5-ի» հարցարանը (PC-PTSD-5) հետազոտվողների մոտ ՀՏՍԽ ախտանիշների մակարդակի բացահայտման համար, Զիմբարդոյի և գործընկերների մշակած «Ժամանակային հեռանկարի հարցարանը» (ZTPI) ընտրվել է ժամանակային հեռանկարների հասկացման համար, իսկ անձնային գծերի և հոգեպաթոլոգիաների բացահայտման համար օգտագործվել է «Մինեսոտայի բազմափուլ անձնային հարցարանի» (MMPI) սեղմ տարբերակը՝ «Մինի մուլտը»:

Տվյալների վերլուծության ընթացքում տարբեր խմբերում ստացված միջին արդյունքների համեմատության դեպքում հավաստիության համար հաշվարկվել է «Սթյուդենտի t գործակիցը»:

Կորելյացիաների դեպքում կիրառվել է «Սպիրմենի ռանգային կորելյացիայի գործակիցը», որը լավագույնս է համապատասխանում տվյալների նման համակազմին, քանի որ համեմատվող արդյունքները ստացվել են չափման «անընդհատ» սանդղակով, ինչպես նաև դրանք «ոչ պարամետրիկ» են, այսինքն՝ չեն հիմնվում արդեն իսկ առկա վիճակագրական տվյալների վրա, այլ չափում են գլխավոր միտումները միջին նշանակությունների նկատմամբ:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթներ:

1. Ի տարբերություն մարտական գործողությունների չմասնակցած անձանց՝ մարտական գործողությունների մասնակցած և ՀՏՍԽ ախտանիշներ ունեցող խմբերում «դրական» ժամանակային հեռանկարների արտահայտվածությունը թույլ է, իսկ «բացասական» ժամանակային հեռանկարների արտահայտվածությունը՝ ուժեղ:
2. Անձնային առանձնահատկությունների արտահայտվածության մակարդակը նորմայից բարձր է մարտական գործողությունների մասնակիցների և ՀՏՍԽ ախտանիշների բարձր մակարդակ ունեցող անձանց շրջանում՝ ի տարբերություն մարտական գործողությունների մասնակցություն չունեցած անձանց:
3. «Դրական» ժամանակային հեռանկարները հակադարձ՝ իսկ «բացասական» ժամանակային հեռանկարները ուղիղ կորելյացիայի մեջ են գտնվում հիպոխոնդրիայի, դեպրեսիայի և պարանոյալության արտահայտվածության ցուցանիշների հետ:
4. Ի տարբերություն ՀՏՍԽ ախտանիշներ չունեցող անձանց՝ ՀՏՍԽ ախտանիշներ ունեցող անձանց շրջանում պարանոյալության,

շիզոիդության և հիպոմանիայի ցուցանիշների հետ ֆատալիստական ներկայի և նեգատիվ անցյալի կորելյացիան ավելի ուժեղ է արտահայտված:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ

1. Իրականացվել է մարտական գործողությունների մասնակից անձանց շրջանում ժամանակային հեռանկարների ուսումնասիրմանն ուղղված հետազոտություն և ինչպես նաև անձնային գծերի հետ դրանց փոխկապակցվածությունների բացահայտում:

2. Փորձ է արվել ցույց տալ, որ մարտական գործողությունների մասնակից անձանց շրջանում, անկախ ՀՏՍԽ ախտանիշների առկայությունից, «բացասական» և «դրական» ԺՀ-ների արտահայտվածության ցուցանիշները տարբեր են:

Տեսական նշանակությունը: Աշխատանքում մանրամասն վերլուծության են ենթարկվել ժամանակի ընկալման և ժամանակային հեռանկարների տեսությունները և մոդելները: Ժամանակային հեռանկարների՝ Ֆ. Զիմբարդոյի և Ջ. Բոյդի դասական մոտեցման վրա հիմնվելով՝ իրականացվել է ժամանակային հեռանկարների ուսումնասիրություն մարտական գործողությունների մասնակից անձանց շրջանում, ինչը բացահայտել է նրանց մոտ «դրական» և «բացասական» ԺՀ-ների արտահայտվածության նոր օրինաչափություններ: Սա ընդլայնում և հարստացնում է ժամանակային հեռանկարի հոգեբանական նշանակության մասին պատկերացումները և իր ներդրումն է ունենում առկա տեսական հիմքերի ամբողջականացման գործում, քանի որ ժամանակային հեռանկարը առաջին անգամ դիտարկվում է անձնային առանձնահատկությունների հետ միասին և մարտական գործողությունների մասնակցության համատեքստում:

Գործնական նշանակությունը: Իրականացված հետազոտությունը ներդրվել է առկա հոգեթերապևտիկ մարտավարությունների կատարելագործման համար, որոնք առավել արդյունավետ են մարտական գործողությունների մասնակից անձանց հետ աշխատանքում: Բացի այս հետազոտությունը կարող է հիմք դառնալ մարտական գործողությունների մասնակից անձանց սոցիալ-հոգեբանական աջակցության կազմակերպման և համակարգայնացման համար:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հուսալիությունը: Հետազոտության արդյունքների հուսալիությունը ապահովելու համար կազմվել են հետազոտական խնդիրներին և նպատակներին համապատասխան ընտրանքի ձևավորման պահանջներ, ըստ որոնց էլ կազմվել են հետազոտական և ստուգիչ խմբերը:

Հետազոտության համար ընտրվել են մեթոդիկաներ, որոնք առավելագույնս ճշգրիտ են չափում հետազոտվող երևույթները, ընդունված են և կիրառվում են միջազգային գիտական միջավայրում:

Հետազոտության ընթացքում օգտագործված մեթոդիկաներից «Մինի մուլտի» մեջ ներառված են նաև ստի և հավաստիության սանդղակներ, ինչը թույլ

է տալիս բացահայտել ստացված արդյունքների շեղումները, որոնք պայմանավորված են սոցիալական ցանկալիության, հարցարանները լրացնելու ցածր մոտիվացիայի, ինչպես նաև՝ ազդող այլ արտաքին փոփոխականների հետ: Փորձարարական խմբի անդամների հետ հետազոտությունն անց է կացվել բուժման ընթացքում նրանց տրամադրված սենյակներում և բուժհաստատության հանգստի դահլիճներում, ինչը ապահովել է հնարավորինս չպարտադրող պայմաններ:

Հնարավոր արտաքին ազդեցությունները չափվել են վերոնշյալ ստի և հավաստիության սանդղակներով, և տվյալների վերլուծության ընթացքում այն հետազոտվողների արդյունքները, ում մոտ այս սանդղակներով ստացված արդյունքները եղել են թույլատրելի ստանդարտի սահմաններից դուրս, չեն հաշվարկվել և չեն ներառվել հիմնական վերլուծությունների մեջ:

Աշխատանքի հրապարակայնություն: Իրականացնված հետազոտության ընթացքը եւ ստացված արդյունքները պարբերաբար քննարկվել են Երեւանի պետական համալսարանի Սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնի, նիստերում եւ գիտական քննարկումների ընթացքում: Ատենախոսության արդյունքները տպագրվել են մի շարք հոդվածների տեսքով:

Աշխատանքի ծավալը եւ կառուցվածք: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 117 էջ: Այն բաղկացած է ներածությունից, 4 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից եւ հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **առաջին գլուխը**, որը վերնագրված է «Ժամանակի էության հիմնախնդրի նկատմամբ փիլիսոփայական եվ հոգեբանական հայացքների զարգացումը», կազմված է երեք ենթագլուխներից, որտեղ դիտարկվում է «ժամանակ» և «ժամանակի ընկալում» հասկացությունների վերաբերյալ հայացքների դինամիկան փիլիսոփայության մեջ, ինչպես նաև՝ դրանց ներդրումը և զարգացումը հոգեբանական գիտության շրջանակներում: **Առաջին ենթագլխում՝** «Ժամանակի ընկալման հիմնախնդրի պատմական հիմքերը և դրա հասկացման փիլիսոփայական ասպեկտները», օգտագործվում է Ջ. Վեարդենի կողմից առաջարկված դասակարգումը, և անդրադարձ է կատարվում «ժամանակի ընկալման» փիլիսոփայական հասկացումներին՝ սկսած Ի. Կանտի. Մ. Գյույոի, Է. Հուսերլի և ՈՒ. Ջեմսի, մինչև ժամանակակից հեղինակներ Բ. Դեյնթոնի, Յ. Ֆիլլիպսի և այլոց աշխատությունները: **Երկրորդ ենթագլխում՝** «Ժամանակի հասկացման հոգեբանական հայեցակարգերը», մանրամասն անդրադարձ է կատարվում «ժամանակի ընկալման» հոգեբանական մոտեցումներին՝ սկսած ամենավաղ հետազոտություններից, որոնք կապվում են Տ. Ֆեխների, Է. Վեբերի, Վ. Վունդտի և Կ. Վիերորդթի անունների հետ. վերջինս իր հերթին գիտական հետազոտությունների դաշտ է բերում «Zeitsinn» հասկացությունը, որը, ըստ Վիերորդթի, ժամանակի ուրույն զգայությունն է՝ նման տեսողության, լսողության և այլ զգայություններին: Այս ենթագլխում անդրադարձ է կատարվում նաև Մ. Ֆրանսուայի և Հ. Հոգլենդի

հետազոտություններին, որոնք առնչվում են ժամանակի ընկալման և մարմնի կամ շրջապատող միջավայրի ջերմաստիճանի փոփոխությունների կապին: Քննարկվում է նաև Կ. Բելլի քննադատությունը «քիմիական ժամացույցների» մոդելների նկատմամբ: Առաջին ենթագլխում մանրամասն ներկայացվում են նաև Կ. Քրիլմանի և Մ.Թրեյսմանի կողմից առաջարկված «ներքին ժամացույցների տեսությունը», ինչպես նաև՝ Թրեյսմանի «ներքին ժամացույցի մոդելը, որը լույս է սփռում ժամանակի ընկալման ներքին մեխանիզմների հասկացման վրա: Կարճ անդրադարձ է կատարվում նաև ներքին ժամացույցների «SET» մոդելին: **Երրորդ ենթագլխում՝** «Ժամանակի ընկալման վրա ազդող հոգեբանական դետերմինանտները», դիտարկվում է տեղեկատվության մրցակցության ազդեցությունը ժամանակի ընկալման վրա, որը կապվում է ուշադրության բաշխման առանձնահատկությունների հետ: Հատկանշական են նաև Ս. Դրոյտ-Վոյլեի և գործընկերների կողմից իրականացված հետազոտությունները, որոնցում դիտարկվում են տևողության ընկալման վրա սադրող հույզերի ազդեցությունները: Այս ենթագլխի շրջանակներում վերլուծության է ենթարկվում Ռ. Հիքսի կողմից առաջադրված ռետրոսպեկտիվ և պրոսպեկտիվ ժամանակային գնահատումների տարբերակումը, որտեղ որպես ժամանակի ընկալման վրա ազդող գործոն է հանդես գալիս առաջադրանքի բնույթի մասին հետազոտվողի նախօրոք տեղեկացվածության փաստը:

Ատենախոսության **երկրորդ գլուխը** նվիրված է «ժամանակային հեռանկար» հասկացության տեղին հոգեբանության կատեգորիալ ապարատում և բաղկացած է երեք ենթագլուխներից: **Առաջին ենթագլխում՝** «Ժամանակին առնչվող հասկացությունների ընդհանրություններն ու տարբերությունները, ժամանակային հեռանկարը», իրականացվում է «ժամանակ» ֆիզիկական հասկացությանը առնչվող հոգեբանական հասկացությունների տարբերակում և վերլուծություն: Առանձնացվում են «ժամանակի ընկալում», «սուբյեկտիվ կամ հոգեբանական ժամանակ», «ժամանակի կառավարում» և, վերջապես, «ժամանակային հեռանկար» հասկացությունները: Վերջինս ավելին է, քան ժամանակային տևողության պարզ արձանագրությունը և վերլուծությունը. այն արտահայտում է ժամանակի մասին պատկերացումների կոգնիտիվ և հուզական բաղադրիչների ամբողջությունը, որտեղ արտացոլվում է ժամանակի և անձի հոգեկանի փոխհարաբերության՝ մարդու վրա ամենաազդեցիկ կողմը: **Երկրորդ ենթագլխում՝** «Ժամանակային հեռանկարի վրա ազդող դետերմինանտները», փորձ է արվում ներկայացնել ժամանակային հեռանկարի առաջնային հետազոտությունները, որոնք կապվում են Կ. Լևինի, Ջ. Նատտինի, Ա. Բանդուրայի և Լ. Կարստենսենի անունների հետ: Ցույց են տրվել ժամանակային հեռանկարի՝ Ֆ. Զիմբարդոյի և Ջ. Բոյդի ուսումնասիրությունները, որոնց վրա էլ մեծ մասամբ հիմնվում են այս ատենախոսությունը և իրականացված հետազոտությունը: Ենթագլխում քննարկվում են ԺՀ բարդության արտացոլման և գնահատման համար օգտագործած «Թեմատիկ ապերցեպտիվ թեստը», «Էմպիրիկ ինվենտերիզացիան», «Շրջանների թեստը», «Մոտիվացիոն

ինդուկցիայի մեթոդը, տարբեր հարցարաններ և «ժամանակային գծերը», որոնցից ոչ մեկը չի ստացել լայն ճանաչում՝ ոչ հուսալի լինելու կամ արդյունքների հաշվարկի բարդության պատճառով: Մանրամասն վերլուծության է ենթարկվում ժամանակային հեռանկարները չափող մեթոդիկան՝ «ZTPI»-ը, որն առաջարկվել է Զիմբարդոյի կողմից և հանդիսանում է ժամանակային հեռանկարների չափման մինչ օրս հայտնի ամենաարդյունավետ և ճշգրիտ մեթոդիկան: Ենթագլխում ցույց են տրվում և ներկայացվում են, Զիմբարդոյի կողմից առանձնացված 6 հիմնական ժամանակային հեռանկարները, որոնք բնորոշ են առնվազն արևմտյան հասարակությանը՝ պոզիտիվ անցյալ, նեգատիվ անցյալ, հեդոնսիստական ներկա, ֆատալիստական ներկա, ապագա և տրանսցենդենտալ ապագա: **Երրորդ ենթագլխում**՝ «Հոգեբանական տրավմայի ազդեցությունը ժամանակային հեռանկարի վրա», ներկայացված են տարբեր տրավմատիկ հետևանքների ազդեցությունները (այդ թվում՝ նաև հոգետրավմայի և հետտրավմատիկ սթրեսային խանգարման) ժամանակային հեռանկարների վրա: Այստեղ, Ֆ. Զիմբարդոյի և Ջ. Բոյդի հետազոտություններից զատ, որտեղ ցույց է տրվում, որ անցյալի «դրական» ժամանակային հեռանկարները դրականորեն են կապված սուբյեկտիվ բարեկեցության հետ, իսկ ժամանակային «բացասական» հեռանկարները բացասական կախվածության մեջ են սուբյեկտիվ բարեկեցության աստիճանից, հատկանշական են նաև Մ. Քորնելիայի և գործընկերների հետազոտությունները, որոնք իրականացվել են հիմնականում ճանապարհատրանսպորտային պատահարների մասնակից անձանց շրջանում:

Ատենախոսության **երրորդ գլուխը**, որը բաղկացած է երկու ենթագլուխներից, նվիրված է հետազոտության նախագծմանը և իրականացմանը: **Առաջին ենթագլխում**՝ «Հետազոտական ընտրանքի ձևավորումը», նկարագրվում և հիմնավորվում են հետազոտության ընտրանքի ձևավորման սկզբունքները: Փորձ է արվում հիմնավորել ընտրանքի համապատասխանությունը հետազոտական նպատակներին, ինչպես նաև՝ ստուգիչ խմբի առկայության կարևորությունը և դերը: Մանրամասն վերլուծության են ենթարկվում նաև հետազոտական ընտրանքի ներառման և բացառման չափանիշները: **Երկրորդ ենթագլխում** փորձ է արվում հիմնավորել հետազոտության ընթացքում օգտագործված մեթոդիկաների ընտրությունը, դրանց համապատասխանությունը դրված հետազոտական նպատակներին և խնդիրներին: Խորը վերլուծություններից հետո հետազոտության անցկացման համար ընտրվել են ԱՄՆ կառավարությանն առընթեր գործող ՀՏՍԽ ազգային կենտրոնի առաջարկած «Առաջնային օգնության ՀՏՍԽ սքրինինգ թեստ ըստ DSM-5-ի» հարցարանը (PC-PTSD-5)՝ հետազոտվողների հետ հնարավոր ՀՏՍԽ բացահայտման համար, Զիմբարդոյի և գործընկերների մշակած «Ժամանակային հեռանկարի հարցարանը» (ZTPI)՝ ժամանակային հեռանկարների հասկացման համար, իսկ անձնային գծերի և հոգեպաթոլոգիաների բացահայտման համար օգտագործվել է «Մինեսոտայի բազմափուլ անձնային հարցարանի» (MMPI) սեղմ տարբերակը՝ «Մինի մուլտը»:

Այդ ենթագլխում նկարագրվում են նաև հետազոտության նախապատրաստական և բուն իրականացման գործընթացները:

Չորրորդ գլխում, որը կազմված է երկու ենթագլուխներից ներկայացված են ստացված հետազոտական տվյալների վերլուծությունները և համեմատությունները: **Առաջին ենթագլխում** մանրամասն նկարագրված են հետազոտական տվյալների մշակման մեթոդները, «հում» հետազոտական տվյալների փոխակերպումը համեմատելի միավորների, օգտագործված բանաձևերը և ծրագրերը: Ինչպես նաև ներկայացված են սատանդարտիզացման բոլոր օգտագործված աղյուսակները, որոնց վրա հիմնվելով իրականացվել է տվյալների փոխակերպումը: **Երկրորդ ենթագլխում** ներկայացված են տարբեր խմբերում ստացված միջին արդյունքների համեմատության հավաստիության համար հաշվարկված «Սթյուդենտի t գործակիցի» կիրառումը, և կորելյացիաների անցկացման համար «Սպիրմենի ռանգային կորելյացիայի գործակիցը», որը լավագույնս է համապատասխանում տվյալների նման համակազմի համեմատությանը, քանի որ համեմատվող արդյունքները ստացվել են չափման «անընդհատ» սանդղակով, ինչպես նաև՝ դրանք «ոչ պարամետրիկ» են, այսինքն՝ չեն հիմնվում արդեն իսկ առկա վիճակագրական տվյալների վրա, այլ չափում են գլխավոր միտումները միջին նշանակությունների նկատմամբ: Այս ենթագլխում աղյուսակների և գծապատկերների տեսքով ներկայացված են ստացված հետազոտական արդյունքները՝ ըստ հետազոտական խմբերի և ենթախմբերի: Յուրաքանչյուր աղյուսակ և գծապատկեր ենթարկվում է մանրամասն նկարագրության, շեշտվում են էական ցուցանիշները և կարևոր կետերը, ինչպես նաև տրվում են բացահայտված արդյունքների հնարավորինս մանրամասն մեկնաբանությունները:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ մարտական գործողությունների մասնակից անձանց մոտ տրավմատիկ իրադարձությունների ազդեցությամբ ավելի արտահայտված են դառնում «բացասական» ժամանակային հեռանկարները, որոնք հանգեցնում են վարքային ոչ կառուցողական արձագանքների և ավելի բարդ են դարձնում սոցիալական վերահարմարման գործընթացը: «Բացասական» ԺՀ-երի միասին ավելի արտահայտված է դառնում պոզիտիվ անցյալի ԺՀ-ը, ինչը այն քիչ ռեսուրսներից է, որը կարող է նպաստել պատերազմի վետերանների հարմարման և հոգեբանական ապաքինման գործընթացին: Անցյալի նկատմամբ դրական վերաբերմունքը ունի մեծ պոտենցիալ այդ նույն անցյալում տեղի ունեցած բացասական իրադարձությունների հետևանքների չեզոքացման գործընթացում:

Մարտական գործողությունների մասնակից ՀՏՍԽ ախտանիշներով անձանցից և մարտական գործողությունների մասնակից հանդիսացող ՀՏՍԽ ախտանիշներ չունեցող անձանցից կազմված հետազոտական ենթախմբերում առկա են ավելի մեծ տարբերություններ՝ կապված նախնական վարկածում արված ենթադրությունների հետ, այն է՝ տրավմա ունեցող անձանց մոտ նեգատիվ անցյալի, հեդոնիստական և ֆատալիստական ներկաների ավելի

բարձր մակարդակներ, քան տրավմա չունեցող անձանց մոտ: Սույն սանդղակներով ավելի նվազ տարբերություններ են առկա մարտական գործողությունների մասնակցած և չմասնակացած հետազոտական խմբերի արդյունքների միջև:

Հետազոտական ենթախմբերում իրականացված համեմատությունը ցույց է տալիս, որ ՀՏՍԽ ախտանիշների անգամ ցածր մակարդակի դեպքում մարտական գործողությունների մասնակցությունը ազդում է ԺՀ-ների վրա, սակայն արտահայտված են միայն հեդոնիստական ներկայի և տրանսցենդենտալ ապագայի ԺՀ-ները, իսկ նեգատիվ և պոզիտիվ անցյալի ԺՀ-երը մոտ են ստուգիչ խմբի արդյունքներին: Սա ցույց է տալիս, որ ՀՏՍԽ-ը կարող է խեղել անցյալի մասին վերաբերմունքը և պատկերացումները, սակայն մարտական գործողությունների ՀՏՍԽ ախտանիշների ցածր մակարդակով մասնակիցները նույնպես հակված են վարքի ապակառուցողական դրսևորումների:

Դիտարկելով փորձարարական և ստուգիչ խմբերում առկա վիճակագրական կորելյացիաները՝ կարող ենք նկատել մի շարք օրինաչափություններ և տարբերություններ: Մասնավորապես՝ նեգատիվ անցյալի և ֆատալիստական ներկայի ժամանակային հեռանկարները երկու խմբերի դեպքում էլ ուղիղ կերպով կապված են անձնային գծերի սանդղակների արդյունքների հետ, այսինքն՝ որքան բարձր են այս ԺՀ-ները, այնքան ավելանում են անձնային գծերի արտահայտվածությունները հետազոտվողների մոտ: Ընդ որում՝ փորձարարական խմբում, ի համեմատ ստուգիչ խմբի, ավելի բարձր են վիճակագրական կապի գործակիցները, հատկապես պարանոյալության և հիպոմանիայի սանդղակներում, ինչը կարող է խոսել տագնապայնության և նյարդային լարվածության բարձր մակարդակների մասին: Ավելի թույլ է կապը փորձարարական խմբի մոտ հիստերիայի սանդղակի պարագայում:

Պոզիտիվ անցյալի ԺՀ-ը երկու խմբում էլ հակադարձ կապի մեջ է անձնային սանդղակների մեծ մասում, սակայն այն ավելի ուժեղ է ստուգիչ խմբի դեպքում:

Ընդհանրացնելով՝ կարելի է առանձնացնել, որ մարտական գործողությունների մասնակիցների մոտ «բացասական» ժամանակային հեռանկարների արտահայտվածության բարձր մակարդակները, կապված լինելով պարանոյալության և հիպոմանիայի սանդղակների բարձր արդյունքների հետ, խախտում են անձի բնականոն վարքային մարտավարությունները, բերում են նրա հոգեկանը սթրեսին արձագանքման մշտական պատրաստակամության վիճակի, այնինչ նման սթրեսային իրավիճակի կրկնման օբյեկտիվ հավանականությունը տվյալ պահին բացակայում է: Նրանց մոտ ապագայի նկատմամբ վերաբերմունքի փոփոխության արդյունքում նաև նվազում են անձնային գծերի կապերը տվյալ ժամանակային հեռանկարների հետ, և անձը կորցնում է «դրական» ժամանակային հեռանկարների հնարավոր ռեսուրսային և կարգավորող ազդեցության հնարավորությունը:

Հոգեթերապևտիկ գործընթացում ժամանակային հեռանկարների և անձնային առանձնահատկությունների փոխկապակցվածությունները օգնում են հասկանալ ժամանակային կոնտիննումի նկատմամբ բուժառուի վերաբերմունքից բխող հնարավոր հուզական և վարքային դրսևորումները: Մարտական գործողությունների մասնակիցների մոտ հեդոնիստական ներկայի, ֆատալիստական ներկայի և նեգատիվ անցյալի ժամանակային հեռանկարների բարձր արդյունքների դեպքում պարանոյալ և հիպոմանիակալ դրսևորումների հաղթահարման նպատակով պետք է ակտիվացվեն պոզիտիվ անցյալը պայմանավորող հնարավոր ռեսուրսները, քանի որ այս հետազոտությունը ցույց է տալիս դրանց ազդեցության ցածր մակարդակ հատկապես հետտրավմատիկ սթրեսային խանգարման ախտանիշներով անձանց մոտ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հոգեբանական գրականության մեջ առկա ՀՏՍԽ համատեքստում ժամանակային հեռանկարների, անձնային գծերի վերաբերյալ իրականացված հետազոտությունները կրում են ոչ ամբողջական և ոչ ընդգրկուն բնույթ, սակայն, միևնույն ժամանակ, առկա հետազոտական տվյալները ստեղծում են նոր հետազոտությունների անցկացման հիմքեր և ունեն գիտական ու կիրառական հետաքրքրություն:
2. ՀՏՍԽ և ժամանակային հեռանկարների կապի մասին փորձարարական հետազոտությունները մեծ մասամբ առնչվում են տրավմաների՝ պատերազմական իրավիճակով չպայմանավորված դեպքերին կամ բացահայտում են գիտական համատեքստից միայն տրամաբանորեն բխող օրինաչափություններ, ինչպիսին է՝ «բացասական» ԺՀ-ների փոխկապակցվածությունը տրավմատիկ իրադարձության հետ:
3. Փորձարարական խմբում ավելի բարձր են նեգատիվ անցյալի, հեդոնիստական ներկայի և ֆատալիստական ներկայի ժամանակային հեռանկարների ցուցանիշները, իսկ պոզիտիվ անցյալի արտահայտվածությունը ավելի բարձր է ստուգիչ խմբի մոտ: Սա ցույց է տալիս, որ անձի բարեկեցության համար «բացասական» հանդիսացող ժամանակային հեռանկարների արտահայտվածությունները զգալիորեն բարձր են մարտական գործողությունների մասնակցության պարագայում, իսկ դրական արտահայտվածությունները կամ նույն մակարդակի են, կամ ավելի ցածր:
4. ՀՏՍԽ ախտանիշների բարձր մակարդակով անձանց շրջանում նեգատիվ անցյալի, հեդոնիստական ներկայի և ֆատալիստական ներկայի ժամանակային հեռանկաների ցուցանիշները ավելի բարձր են: Սա նշանակում է, որ ՀՏՍԽ ախտանիշների բարձր մակարդակը ունի ավելի մեծ ազդեցություն անձի բարեկեցության համար «բացասական» ԺՀ-ների արտահայտվածության աճի վրա, քան մարտական գործողությունների մասնակցության փաստը: Սա բացատրվում է տրավմատիկ իրադարձության

առաջացրած հոգեկան փոփոխություններով, որոնցից առաջինը հենց ժամանակային կոնտիննումի խախտումն է անձի հոգեկան աշխարհում:

5. ՀՏՍԽ ախտանիշների բարձր մակարդակով անձանց մոտ բարձր են դեպրեսիայի, շիզոիդության, պարանոյալության և հիպոմանիայի ցուցանիշները: Այստեղ հատկանշական է հիպոմանիայի և դեպրեսիայի համաժամանակյա բարձր արդյունքների առկայությունը, իսկ պարանոյալության դեպքում միջին արդյունքը բարձր է նորմայի առավելագույն շեմից: Սա ցույց է տալիս, որ տրավմատիկ ազդեցությունն ու ՀՏՍԽ-ը էականորեն բարձրացնում են անձնային առանձնահատկությունների արտահայտվածության մակարդակը: Այս երևույթի հիմքում ընկած է տրավմատիկ իրադարձության կողմից օրգանիզմի մարմնական և հոգեկան ռեսուրսների ակտիվացումը, ինչը հանգեցնում է անձնային առանձնահատկությունների բևեռացման:
6. Ժամանակային հեռանկարների և անձնային գծերի միջև վիճակագրական համեմատությունները ցույց են տալիս, որ նեգատիվ անցյալի և ֆատալիստական ներկայի ԺՀ-ները ուղիղ կորելյացիայի մեջ են գտնվում հիպոխոնդրիայի, դեպրեսիայի, պարանոյալության, շիզոիդության և հիպոմանիայի ցուցանիշների հետ և՛ փորձարարական, և՛ ստուգիչ խմբերի մոտ, սակայն մասնակցած անձանց խմբում գործակիցները ավելի բարձր են: Սա բացահայտում է նոր կորելյացիաներ՝ կապված շիզոիդության և հիպոմանիայի հետ: Հիպոմանիայի բարձր արդյունքներից կարելի է ենթադրել, որ տրավմաների դեպքում ակտիվանում են հոգեբանական գերփոխհատուցման մեխանիզմները:
7. ՀՏՍԽ ախտանիշներ ունեցող անձանց շրջանում ֆատալիստական ներկան և նեգատիվ անցյալը ուղիղ կորելյացիայի մեջ են գտնվում պարանոյալության, շիզոիդության և հիպոմանիայի ցուցանիշների հետ: Այս կապը առկա է, սակայն ավելի թույլ է արտահայտված պատերազմին մասնակցած և ՀՏՍԽ ախտանիշներ չունեցող անձանց շրջանում: Պոզիտիվ անցյալը պատերազմին մասնակցած անձանց շրջանում հակադարձ կորելյացիայի մեջ է գտնվում հոգեպաթիայի և շիզոիդության ցուցանիշների հետ, սակայն ՀՏՍԽ ախտանիշներ ունեցողների շրջանում այս կապը առկա չէ: Սա ցույց է տալիս, որ առկա է ուղիղ փոխկապակցվածություն ժամանակային հեռանկարների արտահայտվածությունների աճի և անձնային գծերի արտահայտվածության մակարդակների բարձրացման միջև փորձարարական ողջ խմբի մոտ, սակայն այն չի պայմանավորվում միայն ՀՏՍԽ առկայությամբ: Այս բացահայտումը պայմանավորվում է այն փաստով, որ մարտական գործողությունների մասնակից անձը կարծես «դուրս է մնում ժամանակի բնականոն ընթացքից», և առաջանում է վարքային նոր քոփինգների ստեղծման կարիք, որոնք կլինեն ավելի հարմարեցված առկա հոգեբանական վիճակի համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Ելնելով ստացված արդյունքներից՝ մարտական գործողությունների մասնակից և ՀՏՍԽ ունեցող անձանց հետ աշխատող մասնագետ-հոգեթերապևտներին կարելի է առաջարկել հոգեթերապևտիկ աշխատանքում ավանդական տրավմա ուղղորդված թերապևտիկ մոտեցումներին զուգահեռ չափել և հասկանալ բուժառուների ժամանակային հեռանկարների արտահայտվածությունները: Դա թույլ կտա մշակել ավելի արդյունավետ թերապևտիկ մարտավարություններ և աշխատանքում հստակորեն տարանջատել տրավմային նախորդող և հաջորդող հոգեբանական և հոգեկան խնդիրների սպեկտրումը:

2.Հոգեթերապևտիկ մարտավարության մշակման ընթացքում կարող են կարևոր ցուցիչներ դառնալ ժամանակային հեռանկարների և անձնային գծերի փոխկապակցվածությունների՝ այս հետազոտության մեջ արված բացահայտումները. որոնք հնարավոր է օգտագործել ինչպես ախտորոշիչ, այնպես էլ բուն հոգեթերապևտիկ գործընթացում՝ նվազեցնելով հոգեթերապևտիկ կուրսի տևողությունը և բարձրացնելով դրա արդյունավետությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՑՈԼՎԱԾ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. ASRIYAN , E., GEVORGYAN, D., MESROBYAN, L., & NAGHDALYAN, M. (2022). Comparative Analysis of the U.S. and Armenian Veteran Mental Health Services. WISDOM, 23(3), 6–19. https://doi.org/10.24234/wisdom.v23i3.848
2. М.Нагдалян - Временные перспективы в психотерапии военных травм: пример кейс анализа. «РЕГИОН И МИР», №2 (2023) стр. 92-94
3. М.Нагдалян - Посттравматическое стрессовое расстройство и временная перспектива. «РЕГИОН И МИР», №3 (2023) стр. 124-127

Нагдалян Мгер Каренович

ОСОБЕННОСТИ ВРЕМЕННОЙ ПЕРСПЕКТИВЫ СРЕДИ УЧАСТНИКОВ БОЕВЫХ ДЕЙСТВИЙ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.04 - "Клиническая и специальная психология".
Защита диссертации состоится 15 сентября 2023 г., в 16:00 на заседании специализированного совета по психологии 067 ВАК по присуждению ученых степеней при Ереванском государственном университете, по адресу: ул. Абовяна 52а, Ереван 0025, Армения.

РЕЗЮМЕ

Актуальность темы. Понятие "временная перспектива" относительно новое в психологической науке, однако оно уже имеет свое особое место и значение во многих психологических исследованиях. Выражая наиболее полную модель отношения человека ко времени, временная перспектива связана с большим количеством психических явлений, воздействует на них и несет в себе их влияние.

ВП (временная перспектива), будучи чувствительной к сильным внешним воздействиям, терпит изменения под влиянием стрессоров и приводит к изменению психологических особенностей личности.

В этом контексте изучение временных перспектив у лиц, участвующих в боевых действиях, приобретает особую актуальность и важность, поскольку возникает необходимость в текущем времени изменить и улучшить качество и эффективность психотерапевтических услуг, предоставляемых лицам, участвующим в боевых действиях, а понимание ВП играет важную роль в этом процессе. Кроме того, ВП рассматривается также в рамках взаимосвязи с личностными особенностями, что делает работу более актуальной и дает возможность пролить свет на ранее неизведанные особенности ВП.

Цель работы выявить у участников боевых действий и при наличии симптомов ПТСР (посттравматическое стрессовое расстройство) взаимозависимость и закономерности проявления временных перспектив и личностных особенностей.

Задачи работы:

1. В контексте проблем данной работы изучить научную литературу, касающуюся временных перспектив, личностных особенностей и влияния на них ПТСР.
2. Разработать методику измерения исследуемых психологических явлений в соответствии с рассматриваемыми в данной работе проблемами, что позволит максимально рассмотреть и выявить их у исследовательской выборки.

3. Разработать исследовательский проект и в соответствии с ним реализовать исследовательские идеи.
4. Записывать и собирать полученные данные, приводить их в измеримые и сопоставимые единицы.
5. Анализировать и сравнивать данные, полученные в результате исследования, в соответствии с исследовательскими группами.
6. Сравнивать и сопоставлять полученные в результате исследования друг с другом, найти статистические корреляции.
7. Разработать предложения, направленные на улучшение психотерапевтической поддержки лиц с высоким уровнем симптомов ПСТР.

Научная новизна работы заключается в том, что

1. Было проведено исследование, направленное на изучение ВП среди участников боевых действий, а также выявление взаимосвязи ВП с личностными чертами:
2. Была предпринята попытка показать, что среди лиц, участвующих в боевых действиях, независимо от наличия симптомов ПТСР, показатели выраженности «отрицательных» и «положительных» ВП различны.

Теоретическая и практическая значимость. В работе детально проанализированы теории и модели восприятия времени и временной перспективы. Основываясь на классическом подходе Ф. Зимбардо и Дж. Бойда, было проведено исследование временных перспектив среди лиц, участвующих в боевых действиях, что выявило новые закономерности в выражении у них «положительных» и «отрицательных» ВП.

Проведенное исследование было внедрено для совершенствования существующих психотерапевтических тактик, наиболее эффективных в работе с лицами, участвующими в боевых действиях. Кроме того, это исследование может стать основой для организации и систематизации социально-психологической поддержки лиц, участвующих в боевых действиях.

Объем и структура работы. Общий объем работы составляет 117 страниц. Она состоит из введения, 4 глав, заключения, списка использованной литературы и приложения.

Mher Naghdalyan

PECULIARITIES OF TIME PERSPECTIVE AMONG PARTICIPANTS OF COMBAT ACTIONS

Dissertation thesis for the scientific degree of PhD in psychological sciences in speciality 19.00.04 - "Clinical and Special Psychology."

The defense of the dissertation will be held on September 15, 2023, at 16:00 at the session of the Specialized Council 067 in Psychology of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia at Yerevan State University. Address: Yerevan 0025, st. Abovyan 52a.

SUMMARY

The relevance of the topic. The concept of "time perspective" is relatively new in psychological science, but it already holds a special place and importance in many psychological studies. Being the most comprehensive model of a person's relationship to time, time perspective is associated with numerous psychological phenomena, influences them, and carries their impact.

Time Perspective (TP), being sensitive to strong external influences, undergoes changes under the influence of stressors and leads to changes in the psychological characteristics of an individual.

In this context, the study of time perspectives among individuals involved in combat actions becomes particularly relevant and significant, as there is a need to improve the quality and effectiveness of psychotherapeutic services provided to combat participants. Understanding TP plays a crucial role in this process. Additionally, time perspective is also considered in relation to personality traits, making the research more relevant and shedding light on previously unknown aspects of TP.

The purpose of the work is to identify interdependencies and regularities in the manifestation of time perspectives and personality traits among combat action participants with symptoms of Post-Traumatic Stress Disorder (PTSD).

Research Objectives:

1. In the context of the research problem, study scientific literature related to time perspectives, personality traits, and their relation to PTSD.
2. Develop a methodology for measuring the investigated psychological phenomena in line with the issues addressed in this study, which will allow for a comprehensive examination and identification of these phenomena within the research sample.
3. Create a research project and implement research ideas based on it.
4. Record and collect the obtained data, presenting them in measurable and comparable units.
5. Analyze and compare the data obtained from the research in accordance with the research groups.

6. Compare and correlate the results obtained from the research with each other, finding statistical correlations.
7. Develop suggestions aimed at improving psychotherapeutic support for individuals with high levels of PTSD symptoms.

The scientific novelty of the study lies in the fact that:

1. An investigation was conducted to study TP among combat action participants and to identify its correlation with personality traits.
2. An attempt was made to demonstrate that among individuals involved in combat actions, regardless of the presence of PTSD symptoms, the expression of "negative" and "positive" TP differs.

The theoretical and practical significance. The work thoroughly analyzes theories and models of time perception and perspective. Based on the classical approach of F. Zimbardo and J. Boyd, a study of time perspectives among combat action participants was conducted, revealing new regularities in the expression of "positive" and "negative" TP among them.

The conducted research was implemented to improve existing psychotherapeutic tactics that are most effective in working with combat action participants. Furthermore, this research can serve as a basis for organizing and systematizing socio-psychological support for individuals involved in combat actions.

Scope and structure of the work. The total volume of the thesis is 117 pages. It consists of an introduction, 4 chapters, a conclusion, a list of references used, and appendices.